

Ա.Շ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

(Պատմական գիտ. քեկնածու)

ՆԱԽԱՄԵՍՐՈՊՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

(Թ Ե Զ Ե Ր)

1. Հեթանոսական հայկական գրականության, ավելի ճիշտ՝ նախամեսորոպյան հայկական գրականության հարցը—հայ ժողովրդի պատմության կարևոր և ակտուալ հարցերից մեկն է։ Դա, ըստ էության, հեթանոսական շրջանի հայկական գրավոր հուշարձանների գոյության-չգոյության և 5-րդ դարի մի շարք հայ մատենագրերի ու թարգմանությունների հարադատության-անհարադատության հարցն է։ Եթե նախամեսորոպյան շրջանում չի եղել հայերեն գրականություն, ապա ուրեմն՝ հեթանոսական Հայաստանում չի եղել և հայկական գրավոր հուշարձան։ Այն բանասերների կարծիքը, որ հեթանոսական Հայաստանում գոյություն է ունեցել բանահյուսություն, իսկ բանահյուսությունը՝ գրականություն է, չի կարելի ընդունել։ Այն, ինչ դեռ գրի չի առնված, նա գրականություն համարվել չի կարող։

Նախամեսորոպյան հայ գրականության հարցի լուսաբանումը կարևոր է և այն տեսակետից, որ հայ մատենագրության հուրս կազմելու կապակցությամբ հայագիտության առաջնակարգ հարցերից մեկն է պարզել Մաշտոցի տեղն ու դերը հայ գրի ու գրականության պատմության մեջ։ Սակայն այդ հարցը հնարավոր է պարզել այն ժամանակ, երբ կպարզաբանվի նախամեսորոպյան հայ գրի ու գրականության առեղծվածը։ Վերջինիս ճիշտ լուծումից է կախված նաև Մեսրոպի դերի ճիշտ գնահատականն ընդհանրապես հայ գրականության պատմության մեջ։

2. Նախամեսորոպյան հայ գրականության հարցում հայ ժողովրդի պատմությանը և գրականությանը վերաբերող մի շարք աշ-

խատություններում գերիշխող է հանդիսացել հետևյալ տրադիցիոն տեսակետը.— հայերը, ինչպես և նրա հարևան վրացի և ադվան ժողովուրդները, մինչև 5-րդ դարը չեն ունեցել իրենց սեփական գիրն ու գրականությունը։ Մինչև այդ շրջանը գրել են հունարեն, ասորերեն կամ պարսկա-պարսկերեն։ 5-րդ դարի առաջին տասնամյակում Մաշտոցը հայոց Վառձապուն թագավորի հովանությամբ և Սահակ Պարթևի օգնությամբ ձեռնամուխ է եղել հայերեն գրի ստեղծմանը և իրականացրել է այն։ Այնուհետև Մաշտոցն անցել է Վրաստան—վրաց գիրն է ստեղծել, անցել է Ադվանից աշխարհը—ադվանից գիրն է ստեղծել և այսպես սկիզբ դրել Անդրկովկասի ժողովուրդների գրին ու գրականությանը։

3. Մեսրոպյան գրերից առաջ հայերեն նշանագիր գոյություն ունենալու մասին մենք հիշատակություն ունենք դեռ ևս Շիրակացու¹⁾, իսկ հետագայում նաև Ասողիկի մոտ։ Սակայն առաջին հայ հեղինակը, որ դուրս է եկել տրադիցիոն տեսակետի դեմ—13-րդ դարի պատմիչ Վարդան Մեծն է։ Նա, հակառակ իր ժամանակ ընդհանրություն գտած վերև հիշված տեսակետի, պնդում է, որ հայերը նախաքրիստոնեական շրջանում ունեցել են իրենց սեփական գիրն ու գրականությունը։ Նա թվում է մինչև անգամ հնում գործածված գրերի թիվը, որոնք պահվելիս են եղել Դանիելի մոտ։

«...դպրութիւն հայերէն քսան և երկու գիր առ Դանիելի Ասորւոյ գտեալ ի հին

¹⁾ Հմմտ. «Անանուն ժամանակագրութիւն, խրմբագր. յօրինեալ յէ դարու», Վենետիկ 1904, էջ 57։

ժամանակաց, որ փասն ոչ պարզելոյ զընդար-
ձակութիւն լիզուիս՝ անհոգացեալ եղև յա-
ռաջնոցն...»¹⁾ Որպէս փաստական ապացոյց
նա հիշում է, ինչն թագաւորի ժամանակ կիլի-
կիայում գտնուած հեթանոս հայ թագաւոր-
ների գրամների փաստը. «Եւ զի լեալ է հայե-
րէն գիր հնոցն՝ վկայեցաւ ի ժամանակս
Լեոնի արքայի, զի գտաւ դրամ ի կիլիկիայ,
հայերէն գրով գրոշմեալ գանուէն կապաշա
թագաւորացն Հայկազանց»²⁾։

Տրագիցիոն տեսակետի դեմ է արտա-
հայտուել առաջին անգամ բանասեր Դ.
Ինճիճյանը։ Նա, բազմաթիւ մեջբերում-
ներ անելով սկզբնաղբյուրներից հոգուտ
նախամեսրոպյան հայ գրի ու գրակա-
նության գոյութիւն, համոզուած պնդում
է, որ Դանիելի մոտ եղած գրերը—հին
հայկական գրերն էին և նրանք էին, որ
Մեսրոպի աշուրներն հիմքը կազմեցին.
«Եւ այսպէս, ըստ մերոց նախայիշեալ
պատմագրաց—ամփոփում է նա իր բերած
պատմական փաստերը—հայկական գիրք
էին, որք գտան առ Դանիէլի, և Դանիէլեան
նշանագիրք էին, զորս լրացոյց Մեսրոպ»³⁾։

Նախամեսրոպյան հայ գրերի գոյութիւն
հարցը վճռականորեն զրել է Մ. Էմինը։
Նա գտնում է, որ Դանիելյան գրերը Հա-
յաստանում գործածական գրեր էին և նը-
րանց դուրս մղեցին հունարեն, զենդերեն և
ասորերեն գրերը՝ դուրս քաղաքական նը-
պատակով⁴⁾։

Պրոֆ. Բ. Պատկանեանը Մաշտոցին
համարում է հայկական աշուրներն ոչ թե
ստեղծողը, այլ կատարելագործողը. «...
ճիշտ է այն կարծիքը՝ գրում է նա,—որի
համեմատ Մեսրոպը ոչ թե գտավ հայոց
աշուրները, այլ արդեն եղած, բայց ընդ-
հանուրից շօղաղործված Դանիելյան հայ-
կական աշուրները կատարելագործեց»⁵⁾։

Նման վճռական եզրակացութիւնների
են հանգել նաև Եվրոպացի մի շարք հայագետ

գիտնականներ (Հյուբշմանը, Պետերմանը,
ակագ. Բրոսսեն և ուրիշները)։ Այսպէս, Պե-
տերմանը նախամեսրոպյան նշանագրերի մա-
սին հետեյալն է գրում. «Հայոց տառերի
գյուտը վերագրում են Մեսրոպին, սակայն
ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս,
որ նա ոչ թե ամբողջ աշուրներն է գրել
կամ կազմել, այլ մի հին, վաղուց մոռաց-
ված աշուրներն է վերականգնել, կատարելա-
գործել և տարածել ամբողջ երկրում»։

Ակադեմիկ Բրոսսեն լիովին հաւատում
է մատենագրական այն տեղեկութեանը,
թե Մաշտոցն օգտագործել է 22 տառ
Դանիելից և պնդում է, որ «Հայոց հին
աշուրները բաղկացած էր 22 տառից, որի
վրա Մեսրոպը ավելացրեց 14 տառ, այդ-
պիսով կազմեց նոր աշուրները ըստ հու-
նական շարահարութեան»⁶⁾։

Նախամեսրոպյան գրի գոյութիւն օգտին
են արտահայտուել Լեոն և Գարազաշյանը։
Վերջինս իր «Քննական պատմութիւն Հայոց»
աշխատութեան մեջ գրում է. «...է ճիշտ
այն, որ ընդհանրապէս կկարծուի, թե Հայք
յառաջ քան զՄեսրոպ հունէին նշանագիր,
ուստի էին անմասն դպրութենէ»⁷⁾։

Նախամեսրոպյան գրի հարցը համոզուած
զրել է Ի. Հարությունյանն իր «Հայոց
գիրը» աշխատութեան մեջ, որը 1888 թ.
արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցա-
նակաբաշխութեան ամբողջ մրցանակին։
Նա պնդում է, որ հայերն ունեին բնիկ
հայ գիր և այդ գիրը «ամուր կերպով շղ-
թալված էր կապաշտութեան հետ»։ Հույն
և ասորի կրօնավորները՝ գալով Հայաստան,
հալածեցին այն՝ ներմուծելով հունական
և ասորական գիրը։ Բայց օտար քարոզիչ-
ները չբավականանալով սրանով՝ սկսեցին
ջնջել նաև հայերեն լիզուէն։ Հայերը տեղ-
նելով իրենց կորստաբեր վիճակը՝ մտածե-
ցին դուրս գալ այս գրութեանից և հնա-
րեցին այն գիրը, որի հեղինակն է համար-
վում Մաշտոցը⁸⁾։

Եվ, վերջապէս, հոգուտ նախամեսրոպ-
յան հայ գրականութեան գոյութեան է

¹⁾ Վարդան Մեծ, Պատմութիւն տիեզերական,
էջ 50։

²⁾ Նույնը, էջ 50։

³⁾ Դ. Ինճիճյան, Հնախաութիւն, III հատոր,
էջ 76։

⁴⁾ М. Эмин, Исследования, Москва 1896 г.
стр. 207, 211, 221.

⁵⁾ Проф. Патканов, История Карапкатвацц,
Примечания, стр. 346.

⁶⁾ Brosset, Deux Historiens Armentens Kirakos de
Ganzac, 13-րդ ժամանակագրութեան։

⁷⁾ Ա. Մ. Գարազաշյան, Քնն. պատմ. Հայոց, Գ, էջ 39.

⁸⁾ Ի. Հարությունեան, Հայոց գիրը, Քրիիսի 1892,
էջ 153-157։

արտահայտվել հայագիտության մեջ մեծ հեղինակություն վայելող գիտնականներից մեկը— ակադեմիկ. Ն. Յ. Մառը։ Նա իր նշանավոր «Ани» տշխատության առաջաբանում հետևյալն է գրում. «Ողջ Կովկասը, ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական են եղել գեղեցիկ ասորա-քարեկալան քաղաքակրթության էպոխայում։ Հայաստանում մայրենի լեզվով գրականություն գոյություն ունեւր մեր թվագրությունից գեղեցիկ քանի դար առաջ»¹։

4. Նախամեարդյան հայկական գրականության ուսումնասիրության հարցում, նրա գոյության գեւ արտահայտվող ուսումնասիրողների մոտ, նկատվում է պատմական փաստերի մեկնաբանման հետևյալ շփոթն ու սխալ մոտեցումը։

ա) Հարցի որոշում ոչ թե գիտական մի շարք զխցիպլինաներով ամբողջությամբ առած, այլ պատմիչների հաղորդած տեղեկություններով։ Այդ ուսումնասիրողները երկրորդական արժեք են տալիս լեզվական, պալեոգրաֆիկ և աղբյուրագիտական այլ զխցիպլինաների տվյալներին, որոնք վերջին հաշվով օգնում են հիմնական հարցը լուծելուն։

բ) Անքննադատ մոտեցում գեպի հայերեն սկզբնաղբյուրները.— եթե Կորյունի կամ Ղազարի տպագիր տեքստում աշտղես է ասված, ուրեմն պատմական իրողությունն այլ կերպ լինել չի կարող։ Նրանք մոռանում են, որ հեթանոսական կուլտուրան աշխատել են շուռ տված երեսով ներկայացնել հենց իրենք, հնագույն քրիստոնյա պատմիչները, որոնց թվում և հայ պատմիչները։ Նրանք ճիշտ չեն հասկանում պատմիչների տեղեկացը, որոնք ամեն կերպ աշխատում են ցույց տալ, որ Հայաստանի հեթանոսական շրջանը զուրա բարբարոսական մի շրջան է։

դ) Շփոթել են իրար հետ հայկական գիր ու հայկական գրականություն հասկա-

ցողությունները՝ հարցի հիմնական առանցքը դարձնելով Դանիելյան գրերը։ Հարցի նման գրվածքն ընդհանրապես ճիշտ չէ, որովհետև մի ժողովուրդ կարող է զարգացած գրականություն ստեղծել անկախ ներանից, թե այդ ժողովուրդը գիր ունի թե ոչ։ Փաստ է, որ Արևելքում մի շարք ժողովուրդներ ստեղծեցին իրենց գիրն ու գրականությունն արարելենով։ Ինչ վերաբերվում է Դանիելյան գրի գոյություն ունենալ-չունենալու հարցին, ապա նրա գրական կամ բացասական լուծումը չի կարող հայկական հեթանոսական գրականության գոյության հարցի որոշիչը լինել, որովհետև հայկական գրականությունը կարող էր գրվել և զարգանալ նաև այլ նշանագրերով։

5. Նպատակ չունենալով հայ գրի ու գրականության հարցում սկզբնաղբյուրներում նկատվող անախրոնիզմների վրա կանգ առնել, բայց ցույց տալու համար՝ թե որքան անհրաժեշտ է նրանց ուշադիր օգտագործումը, մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել միայն մի փաստի վրա— հայկական գրերի ատաղձի վրա։

Սկզբնաղբյուրները գրերի «գյուտը» ներկայացնում են այն ձևով, որ իբր նրանում մասնակցություն են ունեցել չորս ձեռք, ա) Դանիելը, որն իր մոտ եղած գրերն ուղարկել է Վաանյապոլսին, որով և երկու տարի աշակերտներ են սովորեցրել, բ) Մաշտոցը, որը հիմնական ստեղծողն է հանդիսացել, գ) Հատիանոսը, որը ձևավորել է գրերը Սամոսատում և դ) հրաշքը, որի մասին պատմում է Խորենացին. «Եւ տեսանէ (Մեսրոպ) ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աշաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն...» (Խոր. Պատմ. էջ 327)։

Մի կողմ թողնելով աստվածային թաթի օգնությամբ գրվելու առասպելը, հայկական նշանագրերի պալեոգրաֆիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ թե երեք անձնավորություն գրել ու լրացրել են հայերեն այբուբենը, այլ մեկն ուղղակի գրել է իր առջև հունարեն այբուբենը, հայ-

¹ Н. Я. Марр, Ани, 1934, стр. 5.

Ն. Յ. Մառի այս կարծիքը ամանք հասկանում են այն ձևով, որ իբր այստեղ խոսքը «ձեռագրեր»-ին է վերաբերում (!)։ Այդպիսի պնդումը, մեր կարծիքով, առանհամար ճիշտ չհասկանալու պատճառով է։ Այստեղ խոսքը շատ պարզ բնույթի լեզվի մասին է։ Ի միջի այլոց, նույն կարծիքը Մառը հայտնել է նաև իր Դրաբարի քերականության առաջաբանում։

կական տառերը ձևել նրա վրա՝ և ասու- | կազմել է հայկական այբուբենը: Ահա հա-
րերենից վերցնելով լրացուցիչ երեք տառ, | մեծատական աղյուսակը:—

Հունարեն 5-րդ դարի
տառերն՝ այբուբենական
կարգով

Հայերեն
հնագույն
երկաթագիրը

Α	Alpha	Ա	այբ (կարել է ներքևից)
Β	Beta	Բ	բեն (կարել է աջի վերևից փոքրիկ գիծ)
Γ	Gamma	Գ	գիմ (կլոր օղ է ավելացրել)
Δ	Delta	Դ	դա (հետևել է «Գ»-ի օրինակին)
Ε	Epsilon	Ե	եչ (խոր բնկած մասը բաց է արել)
Ζ	Zeta	Զ	զա (վերևից միացրել է գծիկով)
Η(Η)	Eta	Է	է (վերցրել է տառի առաջին կեսը)
Η(Η)	—	Ը	ըթ (վերցրել է «է»-ի կեսը)
Θ	Theta	Թ	թա (զրեթե նույնությամբ)
Θ	—	Ժ	ժե («թ»-ի երկրորդ թևն է վերցրել)
Ι	Iota	Ի	ինի (ավելացրել է փոքրիկ ելուն)
Δ	ϰ	Լ	լյուն (ասորական «լ»-ն շուտ է ավել)
ω		Խ	խե (ասորական «խ» ուրի վրա է գրել)
ϰ	Kappa	Ծ	ծա (զրեթե նույնությամբ)
Κ(Ξ)	—	Հ	հեն (վերցրել է մի մասը ձախից և աջից, թեք ձևով)
Κ(Ξ)	—	Ձ	ձո (2-րդ կեսն է վերցրել)
Κ(Ξ)	—	Ղ	ձա (Հ-ի վերի կողմը ծակ է ձախ)
Λ	Lambda	Ղ	ղառ (պոչ է կպցրել)
Λ	—	Ճ	ճե (ներքևից միացրել է)
Μ	Mic	Մ	մեն (առաջին գիծը վերջինի մի մասը կարել է)
Μ	—	Յ	յի (նստեցրել է)
Ν	Nii	Ն	նու (նստեցրել է)
Ξ	Ksi	Շ	շա (զրեթե նույնությամբ)
Ο	Omikron	Օ	ո (ներքևից կարել է)
Ο	—	Չ	չա (ներքևից թեք գիծ է ավելացրել)
Π	Pi	Պ	պե (զրեթե նույնությամբ)
Σ	(90-ի նշանգիր)	Ջ	ջե (ներքևից թեք գծով է միացրել)
Ρ	Rho	Ր	ռա (կրկնակի ρ + ρ)
Σ	sigme	Ս	սե (նստեցրել է)
Υ	(90-ի նշանը)	Վ	վե (քիչ փոփոխությամբ)
Τ	Tau	Տ	տյուն (վերևի ձախ ելունը ջնջել է)
Ρ		Ր	րե (քիչ փոփոխությամբ)
Ω		Յ	յո (նստեցրել է)
Υ	Upsilon	Ի	վյուն (քիչ փոփոխությունով)
Φ	Phi	Փ	փիւր (քիչ փոփոխությունով)
Χ	Chi	Ք	քէ (քիչ փոփոխությունով)

Համեմատութեանից պարզ երեւում է, որ հայերեն ալբուքները ձևած է հունարենի վրա: Ըստ որում, հունարենի վրա հայերեն տառերը ձևող հեղինակն ամուր սկզբունք է ունեցել ոչ մի տառ չվերցնել նույնութեամբ: Զի խախտել նա հունարենի ալբուքենական կարգը: Միայն այն նոր տառերը, որոնք մտցվում են հայերեն լեզվի առանձնատեսակութեան հիման վրա՝ դրել է ընդօրինակած տառի մոտ:

Բոլորովին անհիմն է այն աղբյուրագետների կարծիքը, որոնք ժխտում են հայերեն ալբուքների հունարենի հիման վրա ձևած լինելու փաստը:

Պալիգրաֆիկ այս փոքրիկ աղագույցը բովանդակում է ասելու համար, որ չի կարելի տառացի հասկանալ պատմիչների տեղեկութեանները: Անհրաժեշտ է ավելի լայն մտախնայ խնդրին և քննել այն:

6. Հայկական մատենագրութեան և հայկական գրերի հետ սերտ կապված հարց է «Նշանագիր իմաստնոց»-ի հարցը: Հայկական պատմագիտական բովանդակութեան ունեցող ձեռագրերում, հատկապես բառարանային և քերականական բովանդակութեան ունեցող ձեռագրերում, ինչպես հայտնի է, հաճախ պատահում են սղագրութեան ամբողջ ցուցակներ, որոնք խնամքով կաղմած ու շարադրված են ըստ հայկական ալբուքների: Նրանք կոչվում են սովորաբար «Նշանագիր իմաստնոց»:

Այսպիսի նշանագրեր են պարունակում ՀՅՍԽ Մատենադարանի մի շարք ձեռագրեր՝ № 342 (373), թերթ 105ր, № 2618, թերթ 253ա—255բ, № 750, էջ 128, № 487, թերթ 166բ, № 123, թերթ 432, № 266, թերթ 93ա, № 2331, թերթ 78բ, 2381, թերթ 85ա և այլն¹:

¹ «Նշանագիր իմաստնոց»-ի որոշ ցուցակներ աղբյուր են հրատարակված են Եղյանի և ուրիշների կողմից (տես Signes hiéroglyphiques dans les manuscrits arméniens, Congrès intern. des Orientalistes, 1873, էջ 436, Սրբաձեռնական Թուրոս աղբյուրի առաջին հատորում (աղ. 1879, էջ 337—340): Համեմատաբար, լիակատար հրատ. Տրդատ Վ. Պալյանը «Նշանագիրը հայոց» վերնագրով, Վիեննա 1898 թ., էջ 13—18., Իսահ Վ. Սրապյանը «Հանդէս Ամսօրեայ»-ում (1902 թ., էջ 201—202), Ֆրեանցիք Մուրադը «Հանդէս Ամսօրեայ»-ում (1903, էջ 144—146, 333—339), Ամենից Լիվ ցուցակը հրատարակել է պրոֆ. Հ. Աճառյանը «Հանդէս Ամսօրեայ»-ում:

«Նշանագիր իմաստնոց»-ի նշանագրերի հիմնական մասը գաղափարագրեր են (հիերոգլիֆներ): Այդ գաղափարագրերի մի մասը համապատասխանում են իրենց նկարին: Այդ նշանագրերից կարելի է բերել մի քանի օրինակներ:—

□	աթու	∩	սիրտ
∪	լուսին	∞	բանական
∩	միջնորդ	∨	գարուն
∪	կղզի	∩∩∩	բուրաստան
∩	թագավոր	∩	արուեստ
+	խաչ	∩	ահալոր
∩	հրեշտակ	∩	աշտանակ
∩	կշեռք	∩	արձաթասեր
∩	աղբյուր	∩	ձմեռ
∩	աստիճան	∩	ձուկ
∩	լեզու	∩	ձակատ
∩	եկեղեցի	∩	ձանապարհ
∩	տապանակ	∩	մատանի
∩	տես	∩	մարդ
∩	փառասեր	∩	մեղր
∩	քաղաք	∩	հախալիչ
∩	վիշապ	∩	հեթանոս
∩	սպասաւոր	∩	կապաշա
∩	սեղան	∩	կեղծավոր
∩	սահման	∩	երաժշտի.
∩	կոնք	∩	դինի
∩	նշխար	∩	դավադան
∩	շուշան		
∩	պատվանդան		
∩	պտուղ		
∩	սեր		

70ա—71բ «Յառուգանութիւնսն պատառիկս, որ գտի»:

72ա—73բ «Մովսէսի խորենացւոյ բան իմաստութեան»:

73ա—75բ «Նշանագիր»:

77ա— միջև վերջ—«Վերլուծութիւնք բացերեալէս բաղմազան բանից և բառից յօքնախումբ շարագրութեամբ արաբեալ գոս Արիստակէս գրչի ի խընդրոյ բաղմաց յարաւեստս գրչութեան»:

Այս ձեռագրի «Նշանագիր իմաստնոցն» ունի 319 նշանագիր: Նշանագրերը դասափորձած են անվանական կարգով: Ուշագրութեան արժանի է, որ «Նշանագիր իմաստնոցն»-ի այս տեքստը շարագրված է խորենացու «Բան իմաստութեան»-ից հետո, որի տեքստը պարունակում է ընթերցանութեան հին ձևեր, «այլ»-ը «այդ» ձևով, «միջոց եղև երկոցունց ոչ ըստ բնութեան, այլ ըստ պատահման», «ոչ կատարել իմաստութեամբ, այլ տրամախոհ որոշութեամբ, «այդ սա է լույս...» և այլն): «Նշանագիր իմաստնոցն»-ի այս տեքստի Մովսեսին վերագրվող քերականության օրգանական մաս լինելու մասին դժվար է պնդել, բայց մի բան անկասկած է, որ Ստեփանոս գրչի «Նշանագիր»-ի այսպիսի կազակցութեամբ հանդես գալը, անկասկած, վկայում է նրա հնութեան մասին:

Մեզ թվում է, որ «Նշանագիր իմաստնոցն»-ը հին հայկական գիր համարելը գիտական փաստերով չի հիմնավորվում, բայց որպես սղագրութեան՝ այնքան հին է, որքան հին է ինքը հայկական գրչութեանը: Չէր կարող պատահել, որ Հռոմում և Բյուզանդիոնում կրթութեան ստացած հայ աշակերտները նրանց օրինակով շատեղծեին հայերեն սեփական սղագրութեան, մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ հայ մատենագրերը ծանոթ են սղագրության հետ: Այսպես, Փավստոս Բյուզանդը՝ խոսելով Ներսեսի՝ Վաղես կաթողիկոսի արած հանդիմանության մասին, գրում է. «Եւ գրէին զայս սեմիարք նոստայի արքային, որք կայինն առաջի թագավորին» (Փաւստոս, Գ, Ե): Սեմիարք նոստայը, ինչպես ճիշտ նկատել է պրոֆ. Հ.

Աճառյանը, դա σήμερον εν μικροῖς-ըն stenographie (սղագրութեան է):

7. Հայաստանի նախարանիկները, խաղերը, ունեցել են իննց սեփական սղագիր գրութեանը, որոնցից մեզ հասել են բաղմաթիվ նմուշներ: Նորագույն ուսումնասիրութեանը ցույց են տալիս, որ հայերը ոչ թե եկվոր ժողովուրդ են, ինչպես նախ է այդ հարցին լեզվաբանության հնդեվրոպական դպրոցը, այլ տեղացիներ—կղերայրակից ժողովուրդ վրացիներին աղվաններին և կովկասյան մյուս ժողովուրդներին: Անգրկովկասի ժողովուրդները հանդիսանում են խաղական կուլտուրայի և գրականության օրինական ժառանգները: Եթե ճիշտ է հարցի այսպիսի դրվածքը, եթե Հայաստանի նախարանիկները գոյութեան են ունեցել VI||-VI-րդ դարերում նախ քան մեր թվագրութեանը, ապա հայ ժողովուրդը էթնիկապես կազմակերպվելուց հետո, զարգացման նոր և բարձր աստիճանում չէր կարող չյուրացնել նախնիքների կուլտուրան և չզարգացնել այն: Նրանք, պարզ է, չէին կարող մոտ 800 դար գրական-սեղծագործական մի քափառ օջախ ապրել:

Նախամեարդության շրջանում հայերեն գրականություն չընդունող ուսումնասիրողներն աշխատում են անտեսել հայկական և խաղական կուլտուրայի միջև գոյութեան ունեցող սերտ կապը: Նրանք կրկնում են նախկին տրագիկոսն տեսակետը՝ հայերի գրսից եկած լինելու մասին և լուծյամբ են անցնում խաղական կուլտուրայի՝ հայերի կողմից յուրացվելու փաստի վրայով:

8. 5-րդ դարից մեզ հասել է հայերեն լեզվով օրիգինալ, թարգմանական և մեկնողական հարուստ գրականություն, արև իր բերականական մեակված ձևերով, հարուստ լեզվականով, սևով և քննասիրությամբ գրականության պատմության սկզբնական օջախի երկեր չեն կարող լինել: Այսպիսի երկեր չի կարելի համարել ոչ Կորյունը և Եղնիկը, որոնք գրաբար լեզվի մաքրության տեսակետից բոլոր լեզվաբանների հիացմունքն են շարժում, ոչ աստվածաշնչի թարգմանությունը, որն իր ճշտութեան տեսակետից, մյուս բոլոր թարգմանությունների շարքում

ամենալավագույններից մեկն է համարվում, և ոչ էլ Ծ-րդ դարի որևէ օրիգինալ կամ թարգմանական երկ: Ծ-րդ դարի երկերն իրենց ոճով և քերականական մշակված ձևովերով այնքան են տարբերվում մյուս դարերում գրված երկերից, որ հնարավոր է իսկույն ճանաչել նրանց:

Եթե հայկական գրականության սկիզբը Ծ-րդ դարն է, ապա հնարավոր չէ՞ր՝

ա) որ Ծ-րդ դարի զանազան հայ հեղինակների աշխատությունները և թարգմանությունները միատեսակ քերականական մշակված ձև ունենային:

բ) որ տարբեր գավառների մարդիկ գրեին միևնույն բարբառով:

գ) որ թարգմանությունների ժամանակ հարկադրված չլինեին բնագրի լեզվից մեծ թվով տերմիններ փոխ առնել:

դ) որ թարգմաններն այդպիսի ճշտություններ:

և ե) որ օրիգինալ աշխատություններն սկսվեին այդպիսի բարձր թեմատիկայով:

Նախամեսրոպյան շրջանի հայ գրականությունը ժխտողները՝ խնդրի դժվարությունից դուրս գալու համար առաջ են քաշում իրենց «բանավոր գրականության» տեսությունը: Հայ ժողովուրդը, ասում են նրանք, ունեցել է իր բանավոր գրականությունը, որը նախապատրաստել է նման բարձր գրականության ծնունդը: Մեր կարծիքով՝ նախ, ճիշտ չէ «բանավոր գրականություն» հասկացողությունը, որովհետև մի բան, որ գրի առնված չէ, նա զեռ ևս գրականություն չէ, այլ բանահյուսություն: և ապա՝ այդպիսի բանահյուսություն իրենց գրականության պատմության արշալույսին ունեցել են գրեթե բոլոր ժողովուրդները: Այդ հրեությունը սպեցիֆիկ չէ հայ ժողովրդի համար: Բոլոր ժողովուրդների գրականությունն սկսվում է զարգացման ցածր աստիճանից և ապա հետզհետե ընթանում դեպի վեր, ավելի բարձր: Հայ ժողովրդի մոտ ևս տեղի է ունեցել այս զարգացումը և Ծ-րդ դարից մեզ հասած նման զարգացած գրականության առկայությունը ենթադրում է իրեն նախորդող գրականության գոյությունը միայն:

9. Նախամեսրոպյան հայկական գրականություն հարցի համար կարևոր նշանակություն ունի մեհենական կուլտուրայի հարցը: Մեհյանները մեզ մոտ բացի կրոնական կենտրոններ չլինելուց հանդիսացել են արդյոք նաև կուլտուրայի և գրականության օջախներ: Ուսումնասիրողներից ոմանք, պետք է տեսն, այս հարցի կողքովն են անցնում: Բայց սա կարևոր հարց է անցյալի կուլտուրան հասկանալու համար:

Հին Հայաստանի մեհենական կուլտուրայի գոյություն մասին գրական և համոզեցուցիչ տեղեկություններ է հաղորդում մեզ Սորենացին: Նա պատմում է Բարդաժան անունով մի պատմագրի մասին, որը Անտոնիոս վերջինի օրով (Զ-րդ դարում) գալիս է Հայաստանում քրիստոնեություն տարածելու, բայց այդ նրան չի հաջողվում: Ճանապարհին նա մտնում է Դարանաղյաց գավառի Անի ամրոցը, որը հայ թագավորների Պանթեոնն էր, թարգմանում այնտեղ եղած մեհենական և թագավորական պատմության վերաբերող մի աշխատություն ասորերեն և իր հետ տանում: Հետագայում այդ աշխատությունն ասորերենից թարգմանվում է հունարեն և հունարենից օգտվում է Սորենացին: Սորենացին այդ մասին գրում է. «Զրույց է մեզ դառն Բարդաժան, որ յնդեսիայ: Բանդի նա յաւուրս Անտոնինոսի վերջնոյ երեկցաւ պատմագրող... եկն նա այսր, որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խում հեթանոսացս. և իբրեւ ոչ ընկալեալ եղև՝ եմուտ նա յաւուրս յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեան, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի. որ և ապա անտի յեղաւ ի յոյն բան: Յորում պատմէ ի մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց... Յայսմ պատմութիւնէ առեալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութիւնէն Արտաւազդայ մինչև յարձանն Սոսրովու» (Սորենացի, էջ 201-202):

10. Ագաթանգեղոսի հաղորդած մի տեղեկությունից երևում է, որ հեթանոսական Հայաստանում գոյություն է ունեցել ոչ միայն մեհենական գրականություն, այլ

և պաշտօնի է Տիր անունով մի աստված: Նրա մեհյանը դանվելիս է եղել Վաղարշապատի մոտերքում, մոտավորապես, Զվարթնոցի տեղը: Այդ մեհյանի քանդումը՝ Տրդատի կողմից, Ագաթանգեղոսը նկարագրում է հետևյալ ձևով. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն դօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբազինան Անահատական գիցն, և որ յերազմոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազանան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան բմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, աւսման նախաւորութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ քակեալ աշրեալ աւերեալ քանդեցին» (Ագաթանգեղոս, էջ 404): Մի ժողովուրդ, որ ունեցել է զպրության և արվեստի աստված, նա ունեցել է, անկասկած, և զպրություն:

Նախամեքսիկյան հայերեն գրականությունը չընդունող դիմադրողները Որմզդին տալիս են իրանական ծագում և հայտարարում, որ դա իրանական աստված է:

Մեր կարծիքով, դա հարցի ճիշտ դրվածք չէ, որովհետև նախ՝ հարցական է՝ թե ով ումից է փոխ առել բայց մի բույն ենթադրենք, որ դա անկասկած է, այնտեղից է փոխ առված: փոխ ամսողները դրա կարիքն ունեցել են: Բոլորովին երկրորդական հարց է թե պրութանն ով է ստեղծել, եթե ավյալ վայրում հողագործությամբ չզբաղվեին, նրանք գութանն էլ չէին քանցնի: Եթե Հայաստանում զպրություն չունենային՝ այդ աստծու կարիքն էլ չէին դրա, նրան դրսից չէին բերի:

Ի միջի ալոց, Որմզդի այդ գրիչ աստվածը գուցե և համապատասխան է ժողովրդի հիշողության մեջ պահված «Գրողին» — «Գրողն — ասում են — տանի քեզ», «Գրողն իր գափտարից քո անունը ջնջի», «Գրողը քո անունը չի քերի գափտարում գրի» և այլն: Ըստ երևույթին, Գրող աստվածու վրա նայվել է, որպես ծնվողներին ցուցակադրող և մահացողներին ելք անող աստված:

11. Հայաստանի մեհյաններում ժամապաշտություն էին կատարում մեծ թվով բրմեր: Այս բրմերը տեղացիներ էին և,

անկասկած, խոսում էին հայերեն և ծիսակատարություն էին կատարում հայերեն լեզվով: Նրանք պիտի որ ծիսակատարության մատյաններ ունենային և չէին կարող ամեն ինչ անգիր ձևով իմանալ:

12. Ուշադրության արժանի է, որ Կառակալա կայսեր (III դար) ժամանակակից Փիլիստրատոս անունով մի հույն հեղինակ իր «Վարք Ապոլինիայ» աշխատության մեջ խոսելով Պամփյուլիայում բռնված հովազի մասին, վկայում է հայերեն գրության գոյության մասին: Անհրաժեշտ ենք համարում այդ հատվածը մեջ բերել՝ վերցնելով իս. Հարությունյանի թարգմանությունից. «Ինչ որ մեր Տափրոսի մասին խոսում են — և որ երկար ժամանակ ոչ ոք չէր հաւատում — թե նա Հայաստանի սահմաններից էլ անցնում է, հաստատում են այն հովազները, որ ինչպես գիտեմ, բռնվում են համեմունքով առաւ Պամփյուլիայում, որովհետեւ այս կենդանիները սիրում են անուշ բուրմունք՝ ուտալի դուրս են գալիս Հայաստանից և զիմում են այն կողմերը, որտեղից քամին բերում է այդ անուշ հոտը: Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա գրված էր հայերեն տառերով (ἐπέγραπτο Ἀρμενίος) հետևյալը. «Արշակ թագավոր Նյուսեայ ասածոյն» ... Արշակն այն ժամանակ հայոց թագավորն էր, և յուր բռնած հովազը, այդ կենդանու մեծության պատճառով նվերել էր Դիոնիսիոսին...» (Տե՛ս Ի. Հարությունյանի «Հայոց գիրը» աշխատությունը, էջ 652 Հմմ. C. L. Kayser, հատ. I, էջ 44):

Նախամեքսիկյան հայերեն գրությունը ժխտող դիմադրողները Փիլիստրատոսի այս տեղեկությունը վրա կասկածում են, որովհետև նրանց կարծիքով «Արշակ անունով հայ թագավոր չի եղել» (!), իսկ մակադրությունը, հավանական է, պահպանվել է եղել: Այսպես, պրոֆ. Հ. Աճառյանը հետևյալն է գրում. «Արշակ՝ եթե իրօք պատմութիւնը ճշմարիտ է, ավելի պարթև թագավորի մ'անունն ըլլալու է, և այն մակադրութիւնն ալ տակի պահպանելն քան թէ հայերէն» (Հ. Աճառյան, Հայոց գրերը: Տե՛ս «Հանդէս ամսօրեայ» 1911 թ., էջ 235):

Նման բացատրություն տվող գիտնականների պատճառաբանությունը, մեր կարծիքով, հիմնավոր չէ, որովհետև նախ՝ հիմք չունենք կասկածելու այս տեղեկության ճշտության վրա, և, ապա՝ ենթադրենք Փլինիոսը շփոթել է և պահպանողներին հայերին է կարծել, բայց այդ ավելի է հաստատում նրա ժամանակ հայերին դրի դոյությունը: Նրա ժամանակ, ուրեմն, հայերին գիրն ու գրականությունն այնքան պիտի հանրածանոթ փաստ եղած լիներ, որ պահպանողներն էլ շփոթեին հայերին հետ:

13. Աղեքսանդր Մամեայ կայսեր ժամանակակից մի հույն հեղինակ, Հիպոլիտ անունով, Մամեայի թագավորության 13-րդ տարում (մեր թվագր. 234-ին) գրել է մի ժամանակագրություն, ուր թվում է իր ժամանակի այն ժողովուրդներին, որոնք ունեն գրություն: Դպրություն ունեցող ժողովուրդների շարքում, ի միջի այլոց, նա հիշում է նաև հայերին: Նա թվում է գրություն ունեցող հետևյալ ժողովուրդներին՝ երբայցիներին, լատինացիներին (որոնց գիրը հռոմայցիներն են գործ ածում), սպանացիներին, հույներին, միդացիներին և հայերին («Οἱ δὲ ἐπιστάμενοι αὐτῶν γράματα εἰσιν: Ἰβηρες, Λατίνοι, αἱεὶ χρωῖται οἱ Ῥωμαῖοι, Σπάνιοι, Ἕλληνες, Μηδοί, Ἀρμένιοι»: Հիպոլիտի աշխատության մեջ եղած այս տեղեկությունը, այդ դրքի Հայաստանում չգտնելու պատճառով, մենք վերցրել ենք պրոֆ. Շանիձեյի և դոց. Աբուլաձեյի „Новооткрытый алфавит кавказских албанцев“ (Hippolytus Werke 4 Bd. Die Chronik). աշխատությունից: Հիպոլիտից, իր ժամանակագրության մեջ՝ օգտվել է Շիրակացին, ավելացնելով այս ժողովուրդների անունների վրա նաև աղվաններին. «Ի սոցանէ, (այսինքն իր թված ժողովուրդներից Ա.Ա.) որք գլխեն գրություն՝ երբայցիք, լատինացիք, որով և հռոմք վարին, սպանացիք, յոյնք, մարք, Հայք, աղուանք» (տես «Անանուն ժամանակագրություն VII դարում»):

Հիպոլիտի ժամանակագրության վավերականության մասին կասկած լինել չի կարող: Դրանով է հեղինակի կիսանդրին, որի վրա գրված նրա աշխատությունների ցու-

ցակում հիշված է նաև «Ժամանակագրություն»-ը: Կասկած չի կարող լինել նաև «Ժամանակագրության» թվականի վերաբերյալ—նա գրված է 234-ին (մեր թվագրության): Եթե 3-րդ դարի հեղինակը մեղայապիտի տեղեկություն է տալիս հայկական գրի դոյության մասին, ապա ինչ հիմք ունենք մենք կասկածելու դրա վրա:

14. 7-րդ դարի հայ մատենագիր Թեոդորոս Քոթենավորը՝ Մայրապոստոլի գեղապետ իր մի ճառում մեղադրում է նրան, որ նա և նրա հետևորդները թշնամաբար են տրամադրված դեպի ավետարանի առաջին կամ հնագույն թարգմանությունը, որը կատարված է Լուսավորչի ձեռքով. «Արդ կահառք բանիցն յուզեալ՝ դարձեալ վիճաբանին: Եռակի հառաքեալ ավետարանական տառիցն պատմութիւնք անմիաբան ի միմեանց գտան. յորոց զմին բնաբալ զովեցուք, և զմիւսն հերեալ տեսաբանացուք ի սրբում կոչարանէ: Քանզի բազմեղբային Դրիգոր առաքելաբարող նահատակն Քրիստոսի գամեմայն ավետարանական պիտաութիւնսն հառաքեալք՝ զոր ինչ յաղագս ասածոյ բանի տնօրինական կիրառութիւն պիտաւէր...» Ճառ «Երանելոյն Թէոդորոսի ընդդէմ Մայրապոստոյն» տես «Յովհ. Խմաստասիրի Աւանդույ...» (Стр. 3) Մատենագրությունը»-ին կից 1833 թ. Վենետիկում հրատարակված ճառերը, էջ 154):

Կարող է կասկածել լինել Լուսավորչի ձեռքով կատարված թարգմանության փաստը, բայց որ Թեոդորոսի այս տեղեկությունը հիմք է տալիս կասկել V դարից առաջ կատարված ավետարանի հնագույն թարգմանություն, որը և վերագրվել է Լուսավորչին, — դրա մասին չի կարելի կասկածել:

15. 4-րդ դարից հայերեն մեղ հասել են երեք հեղինակների պատմությունները — Ագաթանգեղոսի, Փավստոսի և Զենոբ Դլակի: Դրանցից առաջինը, Ագաթանգեղոսը, իրեն համարում է Տրդատի քարաուղար, Փավստոսը՝ Ներսես կաթողիկոսի ժամանակակից հեղինակ է, իսկ Զենոբ Դլակը իրեն համարում է Լուսավորչին ժամանակակից մարդ և մասնակից հեթանոսություն դեմ մղվող կռիվներին: Այդ հեղինակների աշ-

խառութիւնները, հատկապէս Ազաթանգեղոսի և Ջենոր Գլակի աշխատութիւնները, ինչպէս պարզված է, խմբագրված են ուշ դարերում: Լուրջ ուսումնասիրողներից, սակայն, ոչ ոք չի համարել Ազաթանգեղոսի և Փավստոսի աշխատութիւնները կեղծիք, — այգալիսի կասկած եղել է միայն Ջենոր Գլակի նկատմամբ: Փավստոսին և Ազաթանգեղոսին՝ որպէս իրենից առաջ գոյութիւն ունեցող մատենագրեր, հիշում է Ղազար Փարպեցին: Բանասիրութեան մեջ չի հաստատվում նաև Ազաթանգեղոսի կամ Փավստոսի հունարենից թարգմանված լինելը: Ակադեմիկոս Մառք ցույց է տվել, որ հունարենն է թարգմանված հայերենից: Եթե IV դարում գրվել են այգալիսի լուրջ պատմական երկեր, ուրեմն եղել է և գրութիւն:

Նախամետրոպոլիտան հայ գրականութիւնը ժխտողներն աշխատում են շեշտ դնել այդ երկերի խմբագրված լինելու փաստի վրա: Բայց դա հարցի էութիւնը չի փոխում — մեզ հասածը խմբագրված է, բայց նախնականը գոյութիւն ունեւ՞ր, նրանք 4-րդ դարի հեղինակներ են, այդ է էականը:

16. Ղազար Փարպեցին՝ դատաւարտելով եկեղեցիներում ասորերեն պաշտամունք կատարելը՝ Մետրոպի գրերի ստեղծումից առաջ, խոսում է հայերեն գրի գոյութիւն ունենալու մասին. «...մանավանդ թէ զան նեանագիրք նայեռն լեզուայս, (ընդգծումը մերն է) որ հնար է ինքեան ձայնիւ և ոչ մաւրացածոյ բարբառով շահել զողիս արանց և կանանց առ հասարակ» (Ղազար Փարպեցի, էջ 14):

17. Նախամետրոպոլիտան հայ գրին ու գրականութեանը վիճակված չէր խաղաղ ճանապարհ ընթանալ: Նրա զարգացման համար ստեղծվում են աննպաստ քաղաքական պայմաններ: — Երբ որոշ հայ թագավորներ վասսալական կախվածութեան մեջ են ընկնում Հռոմից, հելլենական կուլտուրան սկսում է առանց արգելքի մուտք գործել հայ թագավորների արքունիքը և հայկական գիրն ու գրականութիւնն աշխատում է դուրս մղել այնտեղից: Հայ թագավորներից սմանք հունարեն են կարում իրենց գրամները (տե՛ս Sammlung Petrovicz, Arsaciden-Münzen, Wien S. 1904, 183-191, Tafel xxv): Հայ որոշ թագավորներ հունարեն են գրում իրենց

արձանագրութիւնները (Տրդատի հունարեն արձանագրութիւնը Բաշ-Աբարանում, Արմավիրի արձանագրութիւնը Սելևկյան շրջանից, Սերնոսի տեղեկութիւնը «...դրոշմեալ ի վերայ վիմի գամս և գաւուրս հինգ թագավորացն Հայոց և Պարթևաց յունարէն գպրութեամբ...» և այլն), բայց հայկական տեղական գիրն ու գրականութիւնը շարունակում է զարգանալ ժողովրդի մոտ և մեհյաններում:

Նախամետրոպոլիտան հայկական գրի ու գրականութեան գոյութիւնը ժխտողները՝ հայ որոշ թագավորների հունարենով գրված գրամներն ու արձանագրութիւնները փաստ դարձրած՝ պնդում են հայերեն գրի ու գրականութեան բացակայութիւնը: — Ինչ՞ուտում են նրանք, մեզ հասել են խաղաղական արձանագրութիւնները, իսկ հեթանոսական հայկական գրից ու գրականութիւնից մի օղ անգամ չի մնացել: Մենք ուզում ենք հարց տալ նրանց — ինչ՞ու մեզ չի հասել ավելի ուշ շրջանի V-VIII դ. թվական ունեցող հայերեն ոչ մի ձեռագիր, ինչ՞ու մեզ չի հասել ազվանական գրականութիւնից ոչ մի տող, որի սկիզբը V դարից է: Ամբողջ քաղաքներ են կորել պատմութեան մեջ և այժմ աշխատում են գտնել նրանց տեղերը, հարուստ կուլտուրայով ժողովուրդներ են դուրս եկել պատմութեան բեմից՝ առանց նյութական կուլտուրայի հետք թողնելու. ինչ իրավունք ունինք մենք այդքան խստապահանջ գտնվելու մեղանից 1500 տարի առաջ դորձ ամփող գրութեան նկատմամբ: Բացի այս, նրանք մոռանում են, որ հայ թագավորների գրամները հունարեն են կտրվել, որովհետեւ նրանք շրջանառութեան մեջ էին գրվում Հայաստանից դուրս ևս: Իսկ մեհյանների վիժազիր գրութիւնները մեծ մասամբ մեհյանների վրա պիտի լինեին, իսկ կանգուն մեհյանները մեզ չեն հասել:

18. Նախնական հայկական գրականութեանը սպանիչ հարված հասցրեց քրիստոնեութիւնը: Անհրաժեշտ է նշել, որ քրիստոնեութիւնը Հայաստանում տարածվեց ոչ թէ խաղաղ ճանապարհով, այլ սրով և հրով: Տրդատը, ըստ պատմիչների հաղորդած տեղեկութիւնների, իր զորքի գլուխն անցած քանդում, ավերում էր հեթանոսական մեհ-

Ճանները և նրանց տեղը քրիստոնեական վանքեր ու եկեղեցիներ շինում: Քանդում, ոչնչացնում էին ոչ միայն մեհյանները, այլ և նրանց ստեղծած ողջ կուլտուրան:

Քանդարար այս աշխատանքին հետևեց ասորական և հունական քրիստոնյա քարոզիչների մուտքը Հայաստան, որոնք իրենց հետ բերում էին ոչ միայն քրիստոնեությունը, այլ և իրենց լեզուն ու գրությունը:

Հեթանոսության դեմ կատաղի հալածանք սկսվեց հատկապես քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն հանաչվելուց հետո:

Քրիստոնեության Հայաստանում տարածվելուն և ուժեղանալուն ղուղընթաց, սկսեց ուժեղանալ հունական և ասորական ազդեցությունը: Այդ ազդեցությունը ժամանակի ընթացքում այնքան ուժեղացավ, որ սկսեց սպառնալ տեղական, ազգային կուլտուրայի գոյությունը: Այս ազդեցության դեմ կռվելու

համար էր, որ անհրաժեշտ եղավ առաջ քաշել նորից սեփական գիր ունենալու հարցը և հնարավոր դարձավ անցյալի հարուստ գրականության վերականգնումը նոր տեսանկյունով: Այդ գործն իր ուսերի վրա վերցրեց Մաշտոցը: Մաշտոցի մեծությունը, մերկարժիքով, ոչ թե նրանում է, որ նա հունարեն ալբուրենի վրա ձևեց հայերեն նշանադրերը, այլ որ նա անցյալի գրականության հարուստ փորձի վրա հիմք դրեց մեր ներկա գրականությանը՝ կռվելով տեղական կուլտուրայի գոյությանն սպառնացող հունական և ասորական ազդեցությունների դեմ:

Համարձակ կարելի է ասել, որ Հայաստանում, 5-րդ դարից շատ առաջ, գոյություն է ունեցել հայերեն գրականություն: Այդ գրականությունը մեհյանների ավերակների տակ թաղվեց:—Նա քրիստոնեության առաջին մեծ դժվարից մեկն է: